ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

24.01.2020թ.-29.01.2020թ. կայացած էլեկտրոնային քվեարկության

ք. Երևան **29.01.2020թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների (Ա. Ասոյանի, Ա. Ավանեսյանի, Կ. Բրուտյանի, Գ. Գրիգորյանի, Շ. Դանիելյանի) 1/3-ից ավել բարձրացված հարցերը էլեկտրոնային քվեարկությամբ անցկացնելու համար կողմ լինելու հիման վրա կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Խորհրդի էլեկտրոնային քվեարկություն:

Քվեարկությունն սկսվեց 24.01.2020թ.-ին, ավարտվեց 29.01.2020թ.-ին:

Քվեարկել են.

Ա. Թորոսյան	- Առողջապահության նախարար (խորհրդի նախագահ)
Զ. Բաթոյան	- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	- Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ք. Գրիգորյան	- Արդարադատության նախարարի տեղակալ
Կ. Բրուտյան	- Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Գ. Գրիգորյան	- «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Չեն քվեարկել.

Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկության հարցեր

Հարց 1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) 2019 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում.

Հարց 2. ԱԱՏՄ-ի 2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատման քննարկում և հաստատում,

Հարց 3. ԱԱՏՄ-ի որակի ապահովման վարչության 2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունների և առաջարկությունների ներկայացում և քննարկում:

Քվեարկության նյութերը ներկայացվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին քվեարկության:

Քվեարկությունը տևեց 24.01.2020թ. մինչև 29.01.2020թ.:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում 1-3-րդ հարցերին.

1. Ա. Թորոսյանը քվեարկեց կողմ,
2. Զ. Բաթոյանը քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը քվեարկեց կողմ, (կից ներկայացրել է տեղեկանք՝ տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվության վերաբերյալ: Քարտուղարությանը խնդրել է հաշվի առնել դիտարկումները և կատարել համապատասխան ուղղումներ),
4. Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
5. Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6. Կ. Բրուտյանը քվեարկեց կողմ,
7. Գ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
8. Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության վերջնական արդյունքը՝

Խորհրդի անդամներից 8-ը՝ կողմ, Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Որոշվեց.

1) հավանության արժանացնել ՀՀ ԱԱՏՄ 2019 թվականի տարեկան հաշվետվության նախագիծը.

2) հաստատել ՀՀ ԱԱՏՄ-ի 2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները,

3) ՀՀ ԱԱՏՄ-ի ղեկավարին՝ ընդունել ի գիտություն ՀՀ ԱԱՏՄ-ի որակի ապահովման վարչության 2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունները և առաջարկությունները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ